



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾՍԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61

Էլ.փոստ՝ meo@ypc.am

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի

- Հաշվի առնելով 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի շփման գծում զինված բախումների (որոնք հայտնի դարձան «Քառօրյա պատերազմ» անվանումով), ապա՝ 2016թ. հուլիսին «Մասնա ծոեր» խմբավորման կողմից ՀՀ Ոստիկանության պարեկապահակային գնդի գրավման և դրա շուրջ ծավալված հետագա իրադարձությունների, ինչպես նաև նախորդ տարիների հավաքների և երթերի («Էլեկտրիկ Երևան» և այլն) ժամանակ առաջացող ընդհարումների լուսաբանման դրական և բացասական փորձը,

- նկատի ունենալով պատերազմական իրավիճակները լուսաբանելու՝ լրատվամիջոցների ու լրագրողների հմտությունների որոշակի պակասը,

- արձանագրելով, որ ապրիլյան զինված բախումների ժամանակ առաջնագծում աշխատող լրագրողները, օպերատորներն ու լուսանկարիչները հաճախ անտեսում էին անվտանգության կանոնները,

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը մշակել է պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի սույն ուղեցույցը, որը գուտ խորհրդատվական բնույթ ունի:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների լուսաբանման ժամանակ ևս, ինչպես լրատվամիջոցների և լրագրողների ամենօրյա մասնագիտական գործունեության ընթացքում, հարկ է առաջնորդվել ընդհանուր էթիկական սկզբունքներով: Մասնավորապես.

1. Հավաստիություն և ճշգրտություն

Հատկապես պատերազմական պայմաններում խիստ կարևորվում է ստուգված և հավաստի տեղեկությունների հրապարակումը՝ տեղեկությունների աղբյուրներին հղումով: Հետևաբար, միայն բացառիկ դեպքերում է պետք կիրառել աղբյուրը չբացահայտելու սկզբունքը: Այդ դեպքերում նույնպես խորհուրդ ենք տալիս առաջնորդվել «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 1.2 կետի պահանջով.

«1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը»:

Այսուհանդերձ, գերադասելի է, որ հրապարակվող տեղեկություններն անպայման ստուգված լինեն մի քանի աղբյուրներից, և հրապարակումներում հստակորեն նշվեն այդ աղբյուրները:

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ, առավել քան երբևէ, անհրաժեշտ է պահպանել ճշգրտության կանոնները՝ առաջնորդվելով «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» հետևյալ պահանջներով.

1.5. ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չարաշահվի հանրահայտ դեմքերի անձնական տվյալների հետ ակնհայտ նմանությունը, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս,

1.6. չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում և տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու և միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին:

Խորհուրդ է տրվում նման իրավիճակներում ընդհանրապես լուսանկարների և տեսանյութերի բովանդակությունը փոխող տեխնիկական միջամտություններ չկատարել, բացառությամբ՝ եթե անհրաժեշտ է քողարկել մարդկանց դեմքերը կամ սահմոկեցուցիչ պատկերները: Տեխնիկական միջամտություններն ընդունելի են նաև, երբ հարկ կա քողարկել հակամարտության կամ զինված բախումների գոտու դիրքերն ու մարտական տեխնիկան, և եթե իրավիճակի համար պատասխանատու ռազմական, անվտանգության և իրավապահ մարմինները այդ մասին համապատասխան հրահանգ են տարածել:

2. Փաստերի, կարծիքների և մեկնաբանությունների տարանջատում

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ առավել հստակ պետք է տարանջատված լինեն փաստերը, կարծիքները և մեկնաբանությունները: Այլապես լսարանը կարող է ինչ-որ մեկի կարծիքը կամ մեկնաբանությունն ընկալել իբրև կայացած փաստ, ինչը նման իրավիճակներում լսարանի մոտ իրադարձությունների վերաբերյալ ոչ համարժեք տպավորություն կարող է ստեղծել: Մեկնաբանությունները պետք

է հիմնված լինեն բացառապէս ստուգված փաստերի վրա և ներառեն իրավիճակի վերաբերյալ իրազեկ և իրավասու մարմինների գնահատականները:

3. Անաչառություն և անկողմնակալություն

Անաչառության և անկողմնակալության սկզբունքները պահպանելու համար, լրագրողները, մասնագիտական պարտականությունները կատարելիս, պետք է զերծ մնան ներքին հակամարտությունների ժամանակ հավաքներին և այլ միջոցառումներին, իսկ պատերազմի և զինված բախումների իրավիճակում՝ մարտական գործողություններին անմիջական մասնակցությունից: Լրագրողը դրանց ներկա պետք է լինի միայն լուսաբանելու համար: Ինչ վերաբերում է պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ տուժածներին կամ վտանգի տակ հայտնված անձանց օգնելուն՝ ի հաշիվ մասնագիտական պարտականությունների ժամանակին կատարման, ապա դա կոնկրետ իրավիճակում կոնկրետ լրագրողի և խմբագրության բարոյական ընտրության հարց է, ինչի թե՛ իրավունքի և թե՛ պատասխանատվության կրողն են տվյալ լրագրողն ու խմբագրությունը:

Անհրաժեշտ է գիտակցել հայտնի սկզբունքը՝ մարտական գործողություններին զենքով մասնակցելու դեպքում լրագրողը կորցնում իր հատուկ կարգավիճակը ու զրկվում է միջազգային հումանիտար իրավունքով նախատեսված պաշտպանությունից:

Բ. ԵՐԿՐՆՏՐԱՆՔՆԵՐ

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների առջև ծառանում են մի շարք երկրնտրանքներ: Բոլոր դեպքերում լրագրողն ու նրա ներկայացրած լրատվամիջոցի ղեկավարներն են որոշում, թե ինչպես վարվել այս կամ այն իրավիճակում և պատասխանատու են այդ որոշման համար: Միշտ անհրաժեշտ է որոշումը բացատրել լսարանին:

1. Հրապարակե՞լ, արդյոք, հասու դարձած ռազմական գաղտնիքը, եթե այն հանրային նշանակություն ունի

Հնարավոր է, որ առաջնագծում գտնվող զինծառայողներն ակամա կամ առանց գիտակցելու ռազմական գաղտնիքներ բացահայտեն: Հնարավոր է այլ՝ ոչ ապօրինի ճանապարհով տեղեկանալ ռազմական գաղտնիքի մասին: Եթե լրագրողի ու լրատվամիջոցի համար ակնհայտ է, որ իրենց ռազմական գաղտնիք են հայտնել, ապա որոշում կայացնելուց առաջ հարկ է լրջորեն քննարկել հրապարակելու կամ չհրապարակելու դրական և բացասական կողմերն ու հասարակական պահանջը՝ առաջնորդվելով տևական հանրային շահի պաշտպանության սկզբունքով: Ամեն դեպքում՝ խորհուրդ չի տրվում հրապարակել առնվազն՝

- գորամասերի իրական անվանումները, տեղակայման վայրերը, դիրքերը կամ կողմնորոշիչները
- գորքերի կառուցվածքը, մարտական կազմը, սպառազինության, ռազմական տեխնիկայի, նյութատեխնիկական միջոցների քանակը, տեխնիկայի շարժը

- լուսանկարներ, տեսանյութեր, որտեղ երևում են հրամանատարական կետերը, կրակակետերը, ինչպես նաև դրանց կողմնորոշիչներն ու համայնապատկերը:

Մյուս դեպքերում՝ ստացած տեղեկությունները հարկ է համեմատել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ («Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկությունները») հոդվածի 1-ին՝ ռազմական բնագավառին վերաբերող մասի հետ (տե՛ս սույն ուղեցույցի **հավելված 1-ում**):

2. Գրե՞լ, արդյոք, տեսած վատ արարքների, հոռի բարքերի մասին (լինի բանակում՝ պատերազմի իրավիճակում, թե քաղաքացիական անհնազանդության ժամանակ ցուցարարների շրջանում)

Նկատածն ու արձանագրածը հանրությունից թաքցնելը լրագրողական էթիկայի տեսակետից ընդունելի չէ: Մյուս կողմից՝ հրապարակելու դեպքում լրագրողը կարող է զրկվել պատերազմական կամ հավաքների ժամանակ տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելու հնարավորությունից: Ավելին, մեկ նախադեպը կարող է ողջ լրագրողական համայնքի համար հետագա բարդություններ ստեղծել: Դարձյալ՝ որոշում կայացնելուց առաջ հարկ է քննարկել հրապարակելու կամ չհրապարակելու բոլոր դրական ու բացասական կողմերը: Ամեն դեպքում, նման երևույթների մասին տեղեկությունները չպետք է օգտագործել շանտաժի, անձնական շահերի կամ որևէ մեկին վարկաբեկելու նպատակով: Իսկ հրապարակելու դեպքում՝ անպայման ստանալ և ներկայացնել նաև մասնակիցների կարծիքներն ու մեկնաբանությունները:

3. Հրապարակե՞լ, արդյոք, սենսացիոն լուսանկարը կամ տեսանյութը, որով հնարավոր է նույնականացնել ռազմական օբյեկտներն ու դիրքերը:

Խորհուրդ չի տրվում այդպես վարվել: Այս դեպքում ավելի լավ է տեխնիկական միջամտությամբ այնպես անել, որ դիրքերը չերևան: Տեխնոլոգիաների զարգացման ներկա պայմաններում այդ նյութերը կարող են ծառայել հակամարտության մյուս կողմի շահերին:

4. Հրապարակե՞լ, արդյոք, զոհվածների մարմինների լուսանկարները կամ տեսանյութ այդ մասին:

Սա ամենաբարդ երկրնտրանքն է. հրապարակելը ցույց կտա պատերազմի և զինված հակամարտության սարսափները, սակայն կարող է նաև մարդկանց հոգեկան տառապանքներ պատճառել: Ամեն դեպքում, պետք է հրապարակելիս այնպես քողարկել դեմքերը, որ անձը չնույնականացվի, չէ՞ որ նպատակը սարսափնե՛րը ցույց տալն է և ոչ թե՛ կոնկրետ անձի մահը կամ խոշտանգված վիճակը:

5. Հրապարակել միայն պաշտոնակա՞ն տեղեկություններ, թե՞ նաև այլ աղբյուրներից ստացածը:

Պետական մարմինները, հատկապես պատերազմական իրավիճակում, հաճախ լրատվամիջոցներից պահանջում են հրապարակել միայն պաշտոնական հաղորդագրությունները՝ համարելով, որ միայն դրանք են պարունակում հավաստի և

ճշգրտված տեղեկություններ: Մակայն հանրությունը իրավունք ունի իմանալու ավելին: Ուստի առաջնագծում կամ այլ լարված իրավիճակներում, իրադարձությունների վայրում աշխատող լրագրողը հարկ է, որ ներկայացնի նաև իր արձանագրածն ու այլ աղբյուրներից ստացածը՝ պահպանելով սակայն նախորդ կետերում ներկայացված սկզբունքները, քանի որ միայն պաշտոնական տեղեկությունների հրապարակումը հղի է պետական քարոզչությանն ակամա մասնակցելու վտանգով:

6. Խուսափե՛լ տեղեկատվական պատերազմից, թե՛ դառնալ դրա ակտիվ մասնակիցը:

Խորհուրդ չի տրվում դառնալ տեղեկատվական պատերազմի կողմ: Լրագրողի և լրատվամիջոցի անմիջական գործառույթը տեղեկացնելն է և ոչ թե՛ հակամարտության կողմերից մեկի քարոզչությունը: Միևնույն ժամանակ, պատերազմական իրավիճակներում կարծիքների բազմազանության սկզբունքը, երբ խոսքը վերաբերում է հակառակորդի տեսակետները և մեկնաբանությունները ներկայացնելուն, միշտ չէ, որ կիրառելի է:

Գ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ռազմական գործողությունները ենթադրում են նաև որոշակի անվտանգության կանոններ և միջոցառումներ:

1. Պատերազմական գործողություններն ու զինված հակամարտությունները լուսաբանող լրատվամիջոցներին խորհուրդ է տրվում պատերազմի գոտի ուղարկել նախապես վարժանք-դասընթացներ անցած լրագրողի:

2. Լրագրողներին խորհուրդ է տրվում.

- Անպայման հետն ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, լրագրողական վկայական և հնարավորության դեպքում կրել արտահագուստ, իսկ պատերազմի գոտում՝ զինվորական համազգեստից տարբերվող հագուստ՝ լրագրող լինելը հավաստող PRESS նշումով:
- Պատերազմի գոտում հայտնված լրագրողները պիտի խուսափեն զինվորական համազգեստ և զենք կրելուց, որպեսզի թիրախ չդառնան և որպեսզի գերի ընկնելու դեպքում նրանց հետ չվարվեն ռազմագերու նման:
- Հակառակորդի համար թիրախ չդառնալու նկատառումներից ելնելով, առաջանագծում չօգտագործել բջջային հեռախոս և ժամանակակից կապի այլ միջոցներ: Դրանք, ինչպես նաև լուսանկարչական և տեսանկարահանման սարքերը, կարող ենք նոր տեխնոլոգիական զենքերի ուղղորդիչներ դառնալ:
- Պատերազմական գոտում անվտանգության այլ միջոցառումների մասին՝ տես սույն ուղեցույցի **հավելված 2-ում** ներկայացված՝ ՀՀ պաշտպանության նախարարության պատրաստած «**Ուղեցույց հակամարտության գոտում մարտական գործողությունները լուսաբանող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար**» փաստաթղթում:

3. Ներքին հակամարտությունների ժամանակ և այլ լարված իրավիճակներում պետք է խուսափել ոստիկանության կամ իշխանության այլ ներկայացուցիչների, կամ ցուցարարների հետ վիճաբանությունից ու բախումներից:

Ընդունվել է Ձանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2017թ. հունվարի 30-ի` Արմավիրում կայացած արտագնա նիստում:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 44-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել` ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:

Հավելված 1

Աղբյուրը՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=26193>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ

*Ընդունված է Ազգային ժողովի կողմից
3 դեկտեմբերի 1996 թ.*

ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇԱՐՔԻՆ ԴԱՍՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 9. Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկությունները

Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետևյալ տեղեկությունները.

1. Ռազմական բնագավառում՝

ա) զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստման և անցկացման, զորքերի ռազմավարական, օպերատիվ և զորահավաքային ծավալման, նրանց մարտունակության և զորակոչային պահեստագործի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին.

բ) ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին.

գ) հատուկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների ու զորամասերի տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին.

ե) ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության, ապահովվածության աստիճանի մասին:

Հավելված 2

Աղբյուրը՝ <http://www.mil.am/media/2016/07/11192.pdf>

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սույն ուղեցույցը հստակեցնում է ճգնաժամային իրավիճակներում և մարտական գործողությունների ժամանակ զանգվածային լրատվության միջոցների աշխատանքը: Ուղեցույցը ներառում է լրագրողների անվտանգության ապահովման կանոնների պահպանում, միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքներ և կարգավորում դրանց հետ առնչվող հարաբերություններ: Ուղեցույցը միտված է ճգնաժամային իրավիճակներում և մարտական գործողությունների ժամանակ օգնել լրատվամիջոցներին առավել անվտանգ և ճիշտ լուսաբանել մարտական գործողություններ, չթիրախավորվել և իրենց աշխատանքներում չհրապարակել պետական գաղտնիքներ:

1. Անվտանգության գոտում, մարտական գործողությունների ժամանակ կամ ընդհանրապես առաջնագծում աշխատելիս համագործակցեք բանակի հրամանատարական կազմի հետ, հարցրեք նրանց խորհուրդներն ու հետևեք նրանց ցուցումներին:

2. Առաջնագծում պարտադիր կրեք զրահաբաճկոն և սաղավարտ, որը պետք է տարբերվի զինվորական զրահաբաճկոնից իր մուգ գույնով: Զրահաբաճկոնի դիմացի և մեջքի հատվածում մեծ տառատեսակով փակցրեք press բառը: Երբեք մի կրեք զինվորական համազգեստ. այն ձեզ դարձնում է թիրախ: Զինվորական համազգեստ և զենք կրող լրագրողը կարող է թիրախ դառնալ, իսկ գերվելու դեպքում նրան կարող են վերաբերվել որպես ռազմագերու:

3. Խուսափեք առաջնագծում լուսանկարել զինվորական տեխնիկայի շարժը: Տեխնիկայի շարժը, քանակը և գտնվելու վայրի մասին ցանկացած տեղեկատվության հրապարակումը օգնում է հակառակորդին:

4. Խուսափեք հաղորդումների ժամանակ նշել զորամասերի իրական անվանումները, տեղակայման վայրերը կամ մանրամասն ներկայացնել դիրքերի տեղանքը, կողմնորոշիչները:

5. Արգելվում է տեղեկություններ հաղորդել զորքերի տեղաբաշխման, կառուցվածքի, մարտական կազմի, սպառազինության, ռազմական տեխնիկայի, նյութատեխնիկական միջոցների քանակի և դրանց համալրման, ապահովվածության մասին:

6. Խուսափեք հրապարակել լուսանկարներ, տեսանյութեր որտեղ երևում են հրամանատարական կետերը, կրակակետերը, ինչպես նաև դրանց կողմնորոշիչներն ու համայնապատկերը:

7. Արգելվում է ՁԼՄ ներկայացուցիչների մուտքը զինապահեստներ, սպառազինության և ռազմական տեխնիկայի, հրթիռների, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, դյուրավառ հեղուկների, վառելիքաքսանյութերի պահեստներ:

8. Արգելվում է ՁԼՄ ներկայացուցիչների ծանոթությունը գործերի, գրքերի և մատյանների անվանացուցակին, սպառազինության, ռազմական տեխնիկայի ու գույքի հաշվառման քարտերին, մարտական պատրաստականության և պատրաստության, օպերատիվ, գործերի տեսչական ստուգումների արդյունքների, կազմակերպչական, գորահավաքային ու այլ ծառայողական փաստաթղթերի (հրաման, դեկավար հրահանգ, կարգադրություն, ցուցում, որոշում, կանոնակարգ, հրահանգ, պլան, հաշվետվություն, զեկուցագիր, արձանագրություն, ակտ, հայտ, հեռագիր, ծառայողական նամակ, տեղեկանք, կարգադրագիր, տեղագրական քարտեզ և այլն) բովանդակությանը:

9. Խուսափեք մարտական գործողությունների ժամանակ հրապարակել ինքնաթիռի, ուղղաթիռի, տանկի կամ այլ տեսակի զրահատեխնիկայի կողային համարները և ավտոմեքենայի պետհամարանիշը:

10. Խուսափեք խոշոր պլանով նկարել ծառայությունը շարունակող զինծառայողին, ով խոցել է հակառակորդի ռազմական տեխնիկան, մարտի դաշտում ցուցաբերել բացառիկ հերոսություն: Հակառակորդի համար թիրախ չդարձնելու համար, զինծառայողին նկարել ոչ թե խոշոր պլանով, այլ հեռվից և կողքից:

11. Մարտական գործողությունների ժամանակ զոհերի, վիրավորների կամ ռազմագերիների մասին տեղեկություն հրապարակելիս հիմնվեք բացառապես ՀՀ ՊՆ պաշտոնական հաղորդագրության վրա: Ձեր աղբյուրների ներկայացրած թվերը, անունները մի հրապարակեք: Լրացուցիչ անգամ կապ հաստատեք բանակի ղեկավարության հետ և ճշտեք տվյալները:

12. Սոցցանցերում գրառումներ անելիս պետք է անջատել աշխարհագրական դիրքի նշումը, քանի որ այդ դեպքում գրառում կատարողի տեղանքը կարելի է մեծ ճշտությամբ հայտնաբերել: Եթե դիրքի նշումը անջատել չեք կարող, խուսափեք գրառումներ կատարելիս:

13. Սոցցանցերում հեշտությամբ կարել է կեղծել անձը: Շփվելիս հստակ համոզված եղեք, որ շփվում եք իրական օգտատիրոջ հետ: Դրա համար դիտարկեք զրուցակցի հաշիվը՝ համոզվելու համար՝ այն նորաստեղծ է, թե ոչ:

14. Համացանցում գրառում կատարելիս հիշեք, որ տեղադրված տեղեկատվությունը հնարավոր չէ հեռացնել և գրառումը շատ արագ կտարածվի այլ աղբյուրների, էլեկտրոնային կայքերի միջոցով: Այդ պատճառով յուրաքանչյուր գրառում կատարելիս համոզվեք՝ տեղադրվող տեղեկատվությունն արդյո՞ք կարող է հրապարակվել, արդյո՞ք չի

պարունակում գաղտնի տվյալներ և արդյո՞ք տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը:

15. Աշխատանքի ընթացքում հիշեք ամենակարևոր կանոնը՝ մարդու կյանքն ավելի արժեքավոր է, քան ամենահետաքրքրական ռեպորտաժը կամ հոդվածը: Հետևաբար, պետք չէ վտանգել ո՛չ ուրիշների, ո՛չ էլ ձեր կյանքը տեղեկատվության ձեռքբերման համար:

16. Ձեր հոդվածներում, ռեպորտաժներում խուսափեք «սենսացիա», «շտապ լուր», «անհավանական դեպք», «նոր մանրամասներ» և նմանատիպ ձևակերպումներից: Ցանկացած նմանատիպ ձևակերպում առաջացնում է շփոթ և լարվածություն: Փորձեք լուրերը հաղորդել առանց ավելորդ հուզական տեքստի: Հիշեք, որ ձեր հոդվածները կարդում, իսկ ռեպորտաժները դիտում են միլիոնավոր մարդիկ, այդ թվում՝ զինծառայողների ծնողներ, հարազատներ:

17. Այնպես կայանեք ձեր ավտոմեքենան, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանաք արագ լքել տարածքը: Վտանգի պահին մի՛ պատսպարվեք ավտոմեքենայում, դռների հետևում:

18. Առաջնագիծ մեկնելուց ձեզ հետ վերցրեք տաք վերնահագուստ, քանի որ դուք չգիտեք, թե դիրքերում որքան էք մնալու: Հագեք հարմարավետ, ջրակայուն կոշիկներ:

19. Պայուսակում պահեք միայն ամենակարևոր իրերը՝ տեխնիկա, ֆոտոապարատ: Մինչ դիրքեր բարձրանալը ստուգեք՝ արդյո՞ք տեխնիկան ունի անհրաժեշտ լիցքավորում, քանի որ դիրքերում տեխնիկան լիցքավորելու հնարավորություն չկա: Պայուսակում միշտ պահեք լրացուցիչ մարտկոցներ:

20. Առաջնագիծ մեկնելուց ձեզ մոտ ունեցեք տեղանքի քարտեզը:

21. Պատերազմական գոտում հեռախոսից օգտվելը ցանկալի չէ: Հակառակորդը կարող է գաղտնալսել հեռախոսը, կապի միջոցով տեղորոշել գտնվելու վայրը: Նման գոտիներում անվտանգ է հեռախոսը կամ կապի միջոց ապահովող այլ սարքը «ավիա ռեժիմով» (Airplane mode)-ով գործածելը, եթե դրանցով լուսանկարում կամ տեսանկարահանում է իրականացվում: Խոսելը կամ զանգ ստանալը ոչ միայն տեխնոլոգիապես է հնարավոր դարձնում տվյալ մարդու գտնվելու վայրի որոշումը, այլև ձայնը կարող է նրան թիրախ դարձնել: Հետևաբար, արժե տեսանկարահանումներն անել անձայն, հնարավորինս զսպելով նաև ակամա բացականչությունները՝ հակառակորդի ուշադրությունը չգրավելու համար: Ճիշտ կլինի հեռախոսային և ինտերնետ կապի որևէ տեսակով առաջնագծից ուղիղ եթեր դուրս չգալ. երկրի, և սեփական կյանքի անվտանգությունը պետք է գերադասել ուղիղ եթերի ընձեռած բոլոր տեսակի առավելություններից:

22. Պայուսակի ապահով անկյունում պահեք փաստաթղթեր՝ անձնագիր, լրագրողի վկայական նաև ղեկավարի ստորագրությամբ և կնիքով փաստաթուղթ, որը կապացուցի, որ դուք գործուղվել եք տվյալ կազմակերպությունից:

23. Ձեր պայուսակում ունեցեք փոքրիկ դեղատուփ, որտեղ կլինեն առաջին օգնության համար անհրաժեշտ իրեր, դեղորայք:

24. Ցանկալի է, որ պայուսակում պահեք չոր սնունդ կամ շոկոլադե սալիկներ: Դուք չգիտեք, թե որքան ժամանակ եք մնալու առաջնագծում:

25. Ձեզ հետ շշով ջուր վերցրեք: Չի կարելի խմել ջուր ջրհորից, գետից կամ բաց ջրամբարից:

26. Առաջնագծում օձի կամ թունավոր սողունների խայթոցներից խուսափելու համար քայլեք զգույշ, անգամ ամենաշոգ եղանակին կոշիկները չհանեք: Եթե ձեզ կամ ձեր ընկերոջը խայթել է օձը կամ որևէ այլ սողուն, ապա հարկավոր է մատներով թույլ սեղմելով, թույնը 5-7 րոպե դուրս մղել վերքից: Վերքը մշակել յոդի լուծույթով, դնել վիրակապ և ձեռքի տակ եղած միջոցներով անշարժացնել վերջույթները: Օձի խայթոցի ժամանակ արգելվում է քուղ (ժգուտ) դնել, այրել խայթոցի տեղը, մաշկի վրա կտրվածք անել կամ ալկոհոլ տալ:

27. Ոչ ինտենսիվ արյունահոսության ժամանակ տուժածի վերքի վրա դրեք սեղմող վիրակապ: Ինտենսիվ և առատ արյունահոսության ժամանակ անհրաժեշտ է մատներով կամ բռունցքով երակը սեղմել ոսկորին՝ արյունահոսության տեղի վերևի մասից: Առատ արյունահոսությունը կանգնեցնելու հիմնական միջոցը ոլորանն է: Ոլորանը դրեք արյունահոսության տեղից վերև, վերջույթների վրա, վերքի մոտ: Ոլորանը ճիշտ դնելու դեպքում արյունահոսությունը դադարում է: Որպես ոլորան կարելի է օգտագործել ձեռքի տակ եղած տարբեր միջոցներ՝ կաշվե գոտի, թաշկինակ, հագուստի կտոր:

Հավելյալ տեղեկատվություն

Ջուր - մարտական ստորաբաժանում, բաղկացած 7-9 զինծառայողից:

Դասակ - ստորաբաժանում, որը բաղկացած է երեք ջոկից: Դասակները լինում են հրաձգային, մոտոհրաձգային, հրետանային, կապի, տանկային և այլն:

Վաշտ - մի քանի դասակից կազմված մարտավարական ստորաբաժանում: Վաշտում ծառայում է մոտավորապես 100 մարդ:

Գումարտակ - զորքի ստորաբաժանում, որը բաղկացած է մի քանի վաշտից:

Դիրք - հատված, որ պաշտպանում է ջոկը:

Հենակետ - հատված, որ պաշտպանում է դասակը, վաշտը:

Պաշտպանական շրջան - հատված, որ պաշտպանում է գումարտակը:

Պաշտպանության տեղամաս - հատված, որ պաշտպանում է գունդը, բրիգադը:

Գնդակոծություն - հրաձգային զենքերից արձակված կրակ:

Հրետակոծություն - հրետանային համակարգի զենքերից արձակված կրակ:

Ռմբակոծություն – ինքնաթիռից, ուղղաթիռից արձակված կրակ:

Անկանոն հրաձգություն – Ձենքերից ոչ նշանառու և ոչ նպատակային կրակի վարում:

Առաջնագիծ - Պաշտպանական գծի՝ հակառակորդի ճակատին ամենամոտն ընկած տեղամաս:

Դիվերսիոն թափանցում - շարժական խմբերի (հատուկ նշանակության զորքերի, հրաձգային, մոտոհրաձգային, տանկային, օդադեսանտային) ներթափանցում հակառակորդի թիկունք՝ նրան կորուստներ պատճառելու, կարևոր օբյեկտներ ոչնչացնելու, հաղորդակցության ուղիները խաթարելու նպատակով:

Զինված պայքար - Պատերազմում պայքարի հիմնական և վճռական ձև: Զինված ուժերի և այլ ռազմականացված կազմավորումների կազմակերպված կիրառում՝ որոշակի քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակներին հասնելու համար: Իրենից ներկայացնում է տարբեր ծավալի ռազմական գործողությունների ամբողջություն, որոնք վարվում են տարածական և ֆիզիկական բոլոր տիրույթներում: Զինված պայքարը կարող է մղվել ռազմավարական, օպերատիվ և սահմանափակ ծավալներով՝ օպերացիաների, ճակատամարտերի և մարտերի տեսքով:

Զորաշարժ - զորքի կազմակերպված տեղաշարժն է մարտի ընթացքում հակառակորդի նկատմամբ նպաստավոր դիրք զբաղեցնելու, ուժերի և միջոցների անհրաժեշտ խմբավորում ստեղծելու, ինչպես նաև հակառակորդի կարևորագույն խմբավորումների և օբյեկտների առավել արդյունավետ խոցման համար հարվածներն ու կրակը տեղափոխելու կամ վերանշանառելու (կենտրոնացնելու, բաշխելու) նպատակով: Զորաշարժի տեսակներն են՝ թևանցումը, շրջանցումը, նահանջը և հարվածներով ու կրակով խուսավարումը:

Ճակատամարտ - օպերացիայի բաղկացուցիչ մաս: Այն մեկ օպերատիվ խնդրի լուծման համար ընդհանուր մտահղացմամբ միավորված և զորքի որոշակի խմբավորումների անցկացրած մի շարք մարտերի, հարվածների ամբողջություն է:

Մարտ - զորքի մարտավարական գործողությունների հիմնական ձև է՝ զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների՝ ըստ նպատակի, տեղի ու ժամանակ կազմակերպված և համաձայնեցված հարվածներով, կրակով և զորաշարժով հակառակորդին ոչնչացնելու, նրա հարվածները ետ մղելու և սահմանափակ շրջանում, կարճ ժամանակում այլ խնդիրներ լուծելու համար: Մարտը կարող է լինել համագորային, հակաօդային և օդային:

Մարտական գործողություններ - միավորումների ու զորամասերի կազմակերպված գործողություններ՝ առաջադրված խնդիրները լուծելու համար: Կիրառվում են գործողության տարբեր ձևեր և եղանակներ: Մարտական գործողությունների հիմնական տեսակներն են պաշտպանությունն ու հարձակումը:

Մարտական դիրք - գորքերի կողմից զբաղեցված կամ զբաղեցման համար նախապատրաստված տեղանքի գոտի: Որպես կանոն, մարտական դիրքերը կահավորվում են ինժեներական առումով և հանդիսանում են խորը շարակարգված պաշտպանական գոտիների բաղկացուցիչ մաս՝ վերջիններիս մեջ տեղակայվելով ճակատով և խորության որոշակի կարգով:

Պատերազմ - պետությունների, ժողովուրդների, ազգությունների, սոցիալական խմբերի միջև սոցիալ-քաղաքական, տնտեսական, կրոնական, տարածքային և այլ հակասությունները ռազմական բռնության միջոցով լուծելու ծայրահեղ ձև: Պատերազմի վարման գլխավոր միջոց են հանդիսանում Ձինված ուժերը և այլ ռազմականացված կազմավորումները:

Ռազմական գործողություններ - Օպերատիվ և ռազմավարական օղակում գորքի, ուժերի և միջոցների կազմակերպված կիրառում: Ներառում է նաև գորքի տեղաշարժի բոլոր տեսակներն ու համակողմանի ապահովման միջոցառումների համալիրը: Ռազմական գործողությունները հանդիսանում են պատերազմում զինված պայքարի հիմքը: Ռազմական գործողությունները վարվում են արշավների և օպերացիաների տեսքով:

Տարաշարժ - մարտական գործողությունների նախապատրաստման և վարման ժամանակ գորքի որոշակի մասի կազմակերպված տեղափոխում նոր ուղղության վրա, ինչպես նաև կրակի, հրթիռային գորքերի և ավիացիայի հարվածների տեղափոխում:

Օգտագործվում են նաև ընդհանուր տերմիններ, ինչպես օրինակ, «օպերատիվ ուղղություն», «զինված ուժերի կանոնավոր զորամասեր և ստորաբաժանումներ», «զինված ուժերի հրամանատարություն», «ԶՈՒ պահեստային ուժեր», «օպերացիոն խմբավորում» և այլն:

Հակամարտության գոտում աշխատող լրագրողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հիմնական փաստաթուղթը Ժնևի 1949թ. կոնվենցիան է՝ 1977թ. լրացում-արձանագրություններով: Ցանկալի է, որպեսզի հակամարտություններ լուսաբանող ցանկացած լրագրող դրանց հիմնարար սկզբունքներն իմանա երկու պատճառով. նախ՝ որպեսզի արձանագրի և հրապարակի խախտումները, այդ թվում՝ ռազմական հանցագործությունները: Բացի այդ, փաստաթղթի կետերի մի մասը վերաբերում է լրագրողների իրավունքներին: Համաձայն Ժնևի կոնվենցիայի, զինված բախումների գոտում մասնագիտական պարտքը կատարող լրագրողները պետք է դիտվեն որպես քաղաքացիականներ, եթե նրանք այս կարգավիճակին հակասող որևէ քայլ չեն կատարել: Օրինակ, եթե նրանք զինվորական համազգեստ չեն հագել կամ զենք չեն վերցրել:

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը նույնպես պարբերաբար իր մտահոգությունն է հայտնում լրագրողների ազատության և անվտանգության առնչությամբ: Անվտանգության Խորհրդի վերջին փաստաթուղթն ընդունվել է 2015 թվականին, որտեղ կոչ է արվում պետություններին՝ քայլեր ձեռնարկել պաշտպանելու լրագրողներին, մարտական գործողությունների ժամանակ չթիրախավորելու, իսկ գերի վերցվելու պարագայում նրանց վերաբերվելու որպես քաղաքացիական անձանց:

Լրագրողների անվտանգության հարցերով զբաղվում է նաև Միջազգային կարմիր խաչի կազմակերպությունը: Մասնավորապես, սկսած 1985 թվականից կազմակերպությունում

գործում է թե՛ գիծը (այժմ նաև՝ օնլայն տարբերակով ICRC.org կայքում) այն լրագրողների համար, ովքեր հայտնվել են անելանելի իրավիճակում: ԿԽՄԿ-ն բացառապես մարդասիրական օգնություն է ցուցաբերում: Ոչ միայն լրագրողները, այլև նրանց գործատուները կամ հարազատները կարող են դիմել կազմակերպությանը և խնդրել աջակցություն: Նման իրավիճակներում ԿԽՄԿ-ն կարող է տարատեսակ աջակցություն ցուցաբերել՝ ստանալ տեղեկություն լրագրողի հավանական ձերբակալության մասին, տրամադրել տեղեկություն լրագրողի գտնվելու վայրի մասին, իրականացնել ակտիվ որոնողական աշխատանք կամ էլ առաջին օգնություն ցուցաբերել վիրավորված լրագրողներին: